# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 256-22
# ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18 05 2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Արմինե Խառատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և մի կողմից «Գառնի Գարդեն» ՍՊԸ-ն (գրանցման համար 42.110.879308) ի դեմս տնօրեն Ավետիք Բաղդասարյանի (Անձ. AP0584882, տրված 09.27.2016թ., 019-ի կողմից) (այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով և ժամկետներում հիմնել ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ այգի(պիստակ), իսկ Նախարարությունը պարտավորվում է հիմնված պիստակի ինտենսիվ այգու դիմաց տրամադրել Ծրագրով սահմանված փոխհատուցում:

## 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Նախարարությունն** իրավունք ունի.

2.1.1. Պայմանագիրը կնքելուց հետո, ցանկացած ժամանակ իրականացնել մոնիթորինգ,

2.1.2 Ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, դեպքում չընդունելու իրականացված աշխատանքները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.3. Չփոխհատուցել Շահառուի կողմից կատարված ներդրումները, եթե Շահառուի կողմից չի ներկայացվել Ծրագրի 24-րդ կետի 6-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը,

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Փոխհատուցման ենթակա գումարը սույն Պայմանագրի կքնումից հետո փոխանցել Շահառուի հաշվեհամարին՝ վերջինիս կողմից Ծրագրով նախատեսված դիմումը, ձեռքբերման և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը թղթային կամ

էլեկտրոնային տարբերակով նախարարություն ներկայացնելուց հետո, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու դեպքում 3.1. կետում նշված գրավոր համաձայնությունը կկնքվի և փոխհատուցման գումարները կտրամադրվեն բյուջետային բավարար միջոցների առկայության դեպքում:

2.3. Շահառուն իրավունք ունի՝

2.3.1. Նախարարությունից պահանջել փոխհատուցում Ծրագրի 24-րդ կետով սահմանված կարգով, 16-րդ կետով սահմանված չափաքանակներով:

2.4. Շահառուն պարտավոր է՝

2.4.1. այգեհիմնումն իրականացնել Ծրագրի N 1 աղյուսակում նշված 1 հա այգում տնկիների նվազագույն թվից ոչ պակաս քանակի տնկիներով,

2.4.2. այգեհիմնումն ավարտել փոխհատուցման պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը 2 տարվա ընթացքում: Ընդ որում, գարնանն այգետնկումը պետք է կատարվի մինչև հունիսի 1-ը, իսկ աշնանը՝ մինչև դեկտեմբերի 1-ը,

2.4.3 այգեհիմնմանը հաջորդող 3 տարիների համար վարել գրանցամատյան,

2.4.4. Խստորեն պահպանել Ծրագրի դրույթները,

2.4.5. Ծրագրի դրույթները խախտելու դեպքում փոխհատուցված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե այդ մասին ծանուցումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

## 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի գինը որոշվում է փաստացի կատարված և Ծրագրով փոխհատուցման ենթակա ծախսերի հիման վրա և սահմանվում է գրավոր համաձայնությամբ:

3.2. Նախարարությունը փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է Շահառուին հաշվարկային հաշվին անկանխիկ եղանակով:

## 4. Մոնիթորինգը

4.1. Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական և ավարտական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Ծրագրի 24-րդ կետի 8-րդ ենթակետի ապահովման նպատակով ավարտական մոնիթորինգներն իրականացվելու են վեգետացիայի շրջանում:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շահառուին տրվում են գրավոր ցուցումներ և առաջարկություններ:

4.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շահառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով ՀՀ Կոտայքի մարզի, Գառնի համայնքում 1,5 հեկտար հողատարածքում (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 16032016-07-0054) հիմնել ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող 1,5 հա պիստակի ինտենսիվ այգի, իսկ նախարարությունը պարտավորվում է տրամադրել փոխհատուցում՝ Ծրագրի 16-րդ կետով սահմանված չափաքանակով:

5.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր,

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր )

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 9. Այլ պայմաններ

9.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, 4 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.2. Սույն պայմանգիրը հիմք է այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո 5 (հինգ) տարի ժամկետով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն գույքի նկատմամբ օտարման սահմանափակում կիրառելու համար:

9.3 Սույն պայմանագիրն ուժի մեջ կնքման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
ՀՎՀՀ 02698604
Հ/Հ **900011040095**
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Ա. Խաչատրյան
(ստորագրություն)

Շահառու
«Գառնի Գարդեն» ՍՊԸ
Հասցե՝ Տ Պետրոսյան փ. /13տ/ ,
Գառնի 2215 Կոտայք, Հայաստան
ՀՎՀՀ 03542015
Տնօրեն
Ավետիք Բաղդասարյան
Հասցե՝ Տ Պետրոսյան փ. /13տ/ ,
Գառնի 2215 Կոտայք, Հայաստան
Անձ.AP0584882, տրված 09.27.2016թ.,
019-ի կողմից
Հեռ. +374 77888838
+97477575047
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220311960342000

Ա.Բաղդասարյան
(ստորագրություն)